

ՀԱՏԵՑԻՆՔ ՏՐԻԼԻՈՆԻ ՍԱՇՄԱՆԸ

ՀՀ ազգային վիճակագրական
ծառայութիւնը հրապարակեց Հա-
յաստանի 2008 թուականի սոցիալ-
տնտեսական վիճակի ցուցանիշնե-
րը:

Յուղանիշներն ամբողջութեամբ
համապատասխանում են լաւատե-
սական տրամադրութիւններ տա-
րածելու մասին իշխանութիւնների
իջեցրած շրջաբերականի տառին
եւ ոգուն: Ճիշդ է, յանուն լաւատե-
սական տրամադրութիւնների՝ թոյլ
են տրուել պաշտօնական բազմաթիւ
կեղծիքներ, բայց դա, ի՞արկէ,
կարեւոր չէ: Կարեւորը լաւատեսու-
թիւնն է: Օրինակ՝ բոլորիս աչքի
առաջ երկրում վեր խոյացած վե-
րամբարձ կուունիները Դեկտեմբե-
րին իրար ետեւից կանգնում էին,
բայց պաշտօնական վիճակագրու-
թիւնը արձանագրել է, որ անցած
տարուայ Դեկտեմբերին Հայաստա-
նում աւելի շատ է շինարարութիւն
արուել, քան, ասենք, Նոյեմբերին,
ընդ որում՝ մօտ 20 տոկոսով: Զէ՞ք
հաւատում: Շատ իզուր: Ուրեմն՝
դուք լաւատես չէք եւ ծանօթ չէք
մեր պաշտօնական վիճակագրու-
թեանը: Դուք չգիտէի՞՞ք, որ ձեր
անուանական ամսական աշխատա-
վարձը անցած տարուայ Դեկտեմբե-
րին, Նոյեմբերի համեմատ աճել է:
Ուրեմն՝ իմացէք՝ ձեր անուանական
միջին աշխատավարձը աճել է աւելի
քան 25 տոկոսով: Եւ դա՝ Դեկտեմ-
բերին: Իսկ դուք գիտէ՞՞ք, որ Դեկ-
տեմբերը Հայաստանում գիւղատն-
տեսութեամբ զբաղուելու լաւագոյն
ժամանակաշրջանն է: Զէ՞ք հաւա-
տում, ուրեմն ծանօթացէք մեր պաշ-

տօնական վիճակագրութեամբ եւ կը
պարզէք, որ Դեկտեմբերին գիւ-
ղատնտեսական արտադրանքի ծա-
ւալը Նոյեմբերի համեմատ աճել է
աւելի քան 15 տոկոսով: Էլի՞ էք
կասկածում, ուրեմն նայէք ձեր
շուրջը ու կը տեսնէք, որ հենց
Դեկտեմբերին է Հայաստանում հաս-
նում անանասը, բանանը, սուրճը:
Օրինակ՝ Դեկտեմբերի վերջերին
Արմատիրում սկսում է մանգովի
բերքահաւաքը: Գիւղատնտեսառութեան
ածը աւելի մեծ կը լինէր, եթէ
Դեկտեմբերի սկզբին երաշտը չփնաց-
ներ կոկոսի ողջ բերքը Շիրակի
մարգում: Դե հիմա չորացրել է՝
երաշտի դէմն էլ հո չէ՞ս կարող
առնել, նոյնիսկ եթէ իրականացնես
Գիւմրին նաւահանգստային քաղաք
դարձնելու՝ մեր տնտեսական զար-
գացման նախարար Ներսէս Երից-
եանի երազանքը:

Սի խօսքով՝ շարունակում ենք
զարգանալ: Ճիշդ է, անգամ մեր
պաշտօնական վիճակագրութիւնը
չի կարողացել զարգացման երկնիշ
թիւ նկարել եւ արձանագրել է
տնտեսութեան ընդամէնը 6,8 տոկոս
աճ՝ ամբողջ տարուայ ընթացքում,
բայց դէ՛ դա էլ է լաւատեսական
ցուցանիշ: Լաւատեսական է նաեւ,
որ արդիւնաբերութիւնը, ըստ պաշ-
տօնական վիճակագրութեան, աճել է
2 տոկոսով: Ընդհանրապէս, պաշտօ-
նական վիճակագրութեան ցուցա-
նիշներից գրեթէ բոլորը լաւատե-
սական են: Բայց՝ գրեթէ, Պաշտօնա-
կան վիճակագրութիւնը ինչ թիւ
ամեն՝ կարող է նկարել: Շատ դժուար
է նկարել միայն մեր արտաքին

առեւտրի ցուցանիշները: Դժուար է,
որպէսնեւ այդ ցուցանիշները պէտք
է համապատասխանեն Հայաստանի
հետ առեւտուր անող միւս երկների
համապատասխան ցուցանիշներին:
Այդ իսկ պատճառով՝ մեր արտաքին
առեւտրի ցուցանիշները վատն են:
Աւելի ճիշդ՝ եթէ ասենք վատն են,
ապա նշանակում է ոչինչ չասել:
Դրանք պարզապէս սարսափելի են:
Չիրականացան բոլոր, նոյնիպէ ամե-
նատխուր կանխատեսումները, թէ
մեր արտաքին առեւտրի բացասա-
կան հաշուեկշխոր, այսինքն՝ ներ-
մուծման եւ արտահանման տարրե-
րութիւնը, կարող է համել երեք
միլիարդ դոլարի: Վերջնական ցու-
ցանիշը գերազանցեց նոյնիսկ այդ
կանխատեսումը: 2008 թուականին
բացասական հաշուեկշխոր կազմել է
աւելի քան 3 միլիարդ 300 միլիոն
դոլար: Այս թիւը պէտք չէ, որ միայն
տիրեցնի մեզ: Թէպէտ մեր արտա-
քին առեւտրի բացասական հաշ-
ուեկշխոր արդէն գերազանցում է
պետական բիւջէի եկամտային մասը՝
240 միլիարդ դրամով կամ 800
միլիոն դոլարով, սակայն, միեւնոյն
ժամանակ, արտաքին առեւտրի բա-
ցասական հաշուեկշխոր 3.3 միլիարդ
դոլարի ցուցանիշը մեզ պէտք է
նոյնիսկ հպարտութեան առիթ
տայ: Խնդիրն այն է, որ առաջին
անգամ մենք հատեցինք մէկ տրիլի-
ոն դրամի սահմանագիծը: Սա
պատճական պահ է՝ մէկ տրիլիոն
դրամ՝ 12 գրօներ: Սա գրեթէ նոյն
էֆեկտն ունի, ինչ, ասենք, 20-րդ
դարի աւարտը եւ 21-րդ դարի
մուտքը տօնելիք: Ափառ, որ այդ մէկ

տրիլիոնը բացասական նշանով է, ափսոս, որ այդքան մեծ բացասական ցուցանիշը շատ վատ բան է, բայց հոլ լաւ է հնչում՝ մէկ տրիլիոն։ Կարելի է նոյնիսկ սա դարձնել յաջողուած PR. ասենք՝ մեր պաշտօնեանները գնան հայուրների եթերներ ու արագ-արագ թուարկեն մեր մակրոստենական ցուցանիշները եւ խօսքի մէջ էլ՝ դէմքի ուրախ արտայայտութեամբ յայտարարեն, թէ մեր արտաքին առեւտրի բացասական հաշուեկիուր կազմում է մէկ տրիլիոն դրամ։ Հեռուստադիտողները տեմպի տակ կարող են եւ չըմբռնել, թէ ինչի մասին է խօսքը, բայց «արիլիոն» բառը հաստատ կը տպաւորուի։ Կ' ասէք՝ աճպարարութիւն է։ Ի՞արկէ, աճպարարութիւն է, բայց սա աւելի վատ չէ, քան, ասենք, Տիգրան Սարգսեանի այն պնդումը, թէ կարեւոր չէ՝ որքան է արտաքին առեւտրի բացասական հաշուեկիուր, այլ կարեւոր է, թէ որքան են Հայաստան փող ուղարկում մեր բարեկամներն ու հարազատները։ Սա նշանակում է, որ ըստ Տիգրան Սարգսեանի՝ կարեւոր չէ, թէ մեր տնտեսութիւնը որքանով է մրցունակ, կարեւորն այն է, որ շատ մարդ գնայ դրտում աշխատելու, որ շատ փող ուղարկի Հայաստան։ Ացսինքն՝ Տիգրան Սարգսեանը, ապրանքներ արտահանելու փոխարէն, առաջարկում է արտահանել աշխատուժ։ Սա միակ բանն է, որ Տիգրան Սարգսեանի մօտ կարող է լաւ ստացուել։ Մանաւանդ որ՝ դրա համար պէտք է ոչ թէ տնտեսութեան զարգացման ուղղութեամբ ինչ-որ բան անել, այլ ընդհանրապէս ոչինչ չանել։ Այսինքն՝ շարունակել անել այն, ինչ մինչեւ հիմա արել է Տիգրան Սարգսեանը։

ՀԱՅԿ ԳԵՂՐԳԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՄԱՆԱԿ»

ՄԻ ԶԱԽՈՂՈՒՄԱԾ ՆԱԽԱԳԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Զգիտես ինչու «Հայաստանի ներքաղաքական իրավիճակ» ասելով՝ շատերն առաջին հերթին հասկանում են իշխանութիւնները ընդդիմութիւն յարաբերութիւնները, մինչդեռ կարեւորագոյն ներքաղաքական իրադարձութիւններն ընթանում են իշխանական համակարգի ներսում: Ընդ որում, այդ համակարգի ներսում ակնյալորդն ինչոր բան այնպէս չէ: Թէ ինչու փորձնք հիմնաւորել:

Արդէն իսկ կարելի է արձա-
նագրել, որ Տիգրան Սարգսեանի
վարչապետութիւնը կատարելապէս
ձախողուած է: Նա, եթէ նկատել էք,
տնտեսութեամբ չի էլ զբաղուած,
այսինքն՝ «վարչապետի գործառոցիթ-
ներ» չի իրականացնուած: Տիգրան
Սարգսեանը զբաղուած է բացառա-
պէս բիւթէն լցնելով, այսինքն՝ նրա
ուշադրութեան կենտրոնուած են
յայտնուած միայն այն ինորդիրները,
որոնք անսմիջականօրէն կապուած
են հարկային մուտքերն աւելացնե-
լու հետ: Ցանկացած նորմալ երկ-
րուած վարչապետը պիտի զբաղուած
լինէր անտեսութեամբ, իսկ հարկեր
հաւաքելով պիտի զբաղուէին հար-
կայինն ու մարսաինու:

Բայց միւս կողմից էլ՝ որքան
աւելի ակնյալոտ է զառնում վարչա-
պետի պաշտօնում Տիգրան Սարգս-
եանի ձախողումը, այնքան աւելի
ակտիվանում են Ռոբերդ Քոչար-
եանի՝ վարչապետի պաշտօնին տի-
րանալու հաւանականութեան մա-
սին խօսակցութիւնները: Հնդ որում,
արդէն իսկ ակնյալոտ է, որ Սերժ
Սարգսեանը դրան դէմ է: Ոչ միայն
դէմ է, այլև հնարաւոր բոլոր
միջոցներով փորձում է զիմաղրել:
Բայց հարց է ծագում՝ «ումո՞վ»
դիմադրի:

Բա ի՞նչ պատահեց, վերջացա՞ւ
«Հայրենսամիրութիւնը»: Իսկ ի՞նչ
եղաւ «Հանրային խորհուրդը»:
Սերժ Սարգսեանն ի սկզբանէ
սիսալ հաշուարկ էր կատարել: Նախ՝
պէտք չէր Սարտի 1-ի ոճրագոր-
ծութեամք նախագահ դառնալ, եւ
ընդհանրապէս՝ պէտք չէր «առա-
ջին փուլով» յաղթանակ հոչակել:
Պէտք էր յայտարարել երկրորդ
փուլ, եւ այդ ընթացքում բացա-
յացել ու պատժել առաջին փու-
լում կեղծիքներ իրականացրած-
ներին: Երկրորդ՝ եթի նա իսկապէս
ցանկանում էր ձերքազատուել Ռո-
բերդ Քոչարեանից ու նրա յանցա-
ւոր ժառանգութիւնից, պէտք էր
Տիգրան Սարգսեանի փոխարքին
այլ «գործիք» ընտրել. չէր կարելի
վարչապետ նշանակել մէկին, ով
Քոչարեանի օրօք կԲ նախագահ էր
եղել: Արդիւնքում՝ այսօր Սերժ
Սարգսեանը յայտնուել է բուտա-
ֆորային նախագահի կարգավի-
ճակում, որի ականջը քաշում են եւ
ձեռքից խլում են վերջին (թէկուզ՝
անյաջող) խաղալիքը: Խօսքն այն
մասին է, որ նա չկարողացաւ
նախագահ դառնալ եւ ղեկավարել
երկիրը: Այսինքն՝ նա այդպէս էլ
չկարողացաւ «տիրապետել» այդ
մամնագիտութեանը: Եւ Ռոբերդ Քո-
չարեանը, բնականաբար, պիտի
փորձի օգուտել նրա այդ ապաշնոր-
հութիւնից:

Բայց Սերժ Սարգսեանը կարող է չանչանգտանալ. ինչ-ինչ, բայց Քոչարեանի վերադարձը ժողովուրդը հաստատ չի հանդուրժի: Այլ հարց է, որ բուտաֆորային նախագահ նոյնպէս չի հանդուրժի, բայց դա արդէն այլ խօսակցութեան թեմա է:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄԻՔԱՅԵԼԵԱՆ
«ԶՈՐՇՈՐԴ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

ՄԱՍԻՄ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՈՆԱԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմուեան Ամերիկայի Շրջանի
ԽՄԲԱԳԻՌ՝
ՏՕՔԹ. ԱՐԾԱԿ ԳԱԶԱՆԲԵԱՆ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝
ԳԱԲՐԻԵԼ ՍՈԼՈՅՅԵԱՆ
ՍԱՅԱԿ ԹՈՒԹԵԵԱՆ
ՏՕՔԹ. ՅԱՐՈՒԹԵԻՆ ԱԱՐԴԵԱՆ
ՎԱԶԳԻՆ ԽՈՏԱՆԵԱՆ
ՅԱՋՈՅ ՏԵ՛ՐԱԿԵՐՈՒ

ՅԱՐՎԻԹԻ ՏԵՂ ԿԱՐՈՒԹԵԱՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ
Հեռ. (626) 797-7680
Ֆաքս. (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
<http://www.massisweekly.com>

MASSIS Weekly
Organ of the Armenian Social
Democratic Hunchakian Party
of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August
ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, Canada \$60 (Second
Class) \$75.00 (Air Mail)

Class), \$75.00 (Air Mail)
Overseas \$85.00 (2nd Class Mail),
\$125.00 (Air Mail).

US funds & Drawn on US banks.
Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆ. «225 ԵՒ 300 ՅՈՂՈՒԱԾՆԵՐՈՎ ՅԱՐՈՒՅՑՈՒԱԾ ԳՈՐԾԸ ՇԻՆԾՈՒ Է»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏՈՅՑ»:
Հայաստանի ժողովրդական կու-
սակցութեան (ՀԺԿ) առաջնորդ Ստե-
փան Դեմիրճեանի համոզմամբ,
հայաստանեան իշխանութիւնները
«գիտակցել են, որ «7-ի գործը»
չինծու է, եւ այն «փակելու միակ
փակելու միակ ձանապարհը Քրէա-
կան օրէնսդրքի 300 եւ 225
յօդուածները փոփոխելն է»:

ՀԺԿ-ի նախագահի կարծի-քով, Եւրախորհրդի խորհրդարանական վեհաժողովը թիւ 1643 բանաձեւից «Քաղղանտարիկեալներ» տերմինը հանեց հենց այդ պատճառով, որ «Հայաստանի իշխանութիւնները խոստացել են այդ հարգին միհնէել ապահով լուծում տալ»:

«Հաստ էութեան, իշխանութիւնները խօսք են տուել, որ այդ հարցը լուծելու են՝ փոփոխու-

թեան ենթարկելով Քրէական
օրէնսգրքի 300 և 225 յօդուածնե-
րը», - լրագրողների հետ հան-
դիպմանը ուրբաթ օրը ասաց Ստե-
փան Դեմիրճեանը: - «Բայց
հարցն այն է, որ այդ յօդուածնե-
րով յարուցուած մեղադրանքները,
[ամբողջ] գործը շինծու է... Ընդ-
դիմութիւնը որեւէ յեղաշրջման
փորձ չի կատարել»:

«Հասկանալի է, որ սրանով
վարչախումբը փորձում է փրկել
իր դէմքը, բայց կան նաեւ այլ
քաղբանտարկեամեր, այլ յօդուած-
ներով... Բոլորի հարցը պէտք է
լուծուի: Ես յուսով եմ, որ իշխա-
նութիւնները քայլեր կ'անեն: Եւ ի
վերջոյ, նաեւ պէտք է զիտակցեն,
որ եթէ եւրոպայի խորհուրդը

A close-up portrait of a man with dark hair, wearing a dark suit jacket, white shirt, and patterned tie. He has a serious expression and is looking slightly to the left of the camera. The background is dark and out of focus.

ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճյան

ձանի իրաւունքից չզրկեց պատուիրակութեանը, դա չի նշանակում, որ հարցը հանգուցալուծուելէ, որ ճգնաժամը յաղթահարուելէ»:

Ստենիան Դեմիրճեանը հաս-
տատեց այս շաբաթ աւելի վաղ Հայ-
ազգային կոնգրեսի տարածած
տեղեկութիւնները, թէ իշխանու-
թիւնները արդէն սկսել են ոստի-
կանութեան միջոցով ընդդիմու-
թեան ակտիւիտաներին զգուշաց-
նել, որպէսզի վերջիններս չմաս-
նակցեն մարտի 1-ին նախատես-
ուած հանրահաւաքին:

«Նման ինֆորմացիա կայ», -
ասաց Հեկ-ի առաջնորդը: - «Շատ
ակտիվիտետների «մշակում են»,
որպէսզի հանրահաւաքին չմաս-
նակցեն... Փաստեր կան... Սակայն,
բոլոր դէպքերում, հանրահաւաքը
կը լինի եւ, ես կարծում եմ,
բաւականին բազմամարդ հանրա-
հաւաք»:

Վ. ԴԱԼԼԱՔԵԱՆ. «ՈՉ ՈՔ ԶԻ ԿԱՍԿԱԾՈՒ, ՈՐ ՀՅԱ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ ՈՒ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՇՈՒԽ»

«Սա չի կարող կապ չունենալ
«7-ի գործի» հետ: Սա ես գնահա-
տում եմ՝ որպէս իրավիճակային
լուծում, երբ «7-ի գործով» դա-
տավարութեան ժամանակ դատա-
ւորը յայտնուել է պատային վի-
ճակում եւ կառավարութիւնը առա-
ջարկում է նման լուծում», - Փետր-
ուար 3-ին Ազգային ժողովում
նման տեսակէտով հանդէս եկաւ
անկախ պատգամաւոր Վիկտոր Դալ-
լաքեանը: Նշենք, որ խօսքը վերա-
բերում է «Քրիստոն դատավարա-
կան օրէնսգրքում» նախատեսուող
այն փոփոխութեանը, ըստ որի,
եթէ դատական նիստի ժամանակ
ամքաստանեալները չեն կատարում
դատաւորի կարգադրութիւնները,
կամ խախտում գործող կարգը
դատաւորն իրաւունք ունի հեռաց-
նել նրանց եւ դատը շարունակել
առանց ամքաստանեալների: Այժմ
գործող օրէնքով, դատաւորն իրա-
ւունք չունի դատը շարունակել
առանց ամքաստանեալների եւ եթէ
նրանց հեռացնում է դատարանի
դաշլիճից, ապա դատական նիստը
յետաձգվում է:

«Երբ դատարանում յայտարարում են «Ոտքի՛, դատարանն է գալիս», այդ ո՞ր դատարանի մասին է խօսքը. Արդեօ՞ք խօսքը այն դատարանի մասին է, որը կատարում է քաղաքական պատուէր, արդեօ՞ք խօսքը այն դատարանների մասին, է որոնք կոռուլմագցուած են», - ասաց նա ու յաւելեց, որ դատական համակարգի ու նրա



Անկախ պատգամաւոր
Վիկտոր Դալլաֆեան

անկախութեան խնդիրը նորան-
կախ Հայաստանի պատմութեան
կարեւորագոյն խնդիրներից մէկն
է:

«Որեւէ մէկը չի կասկածում,
որ ժողովրդավարութեան ցածր
մակարդակ ունեցող Հայաստանում
դատարանները կատարում են քա-
ղաքական պատուէր եւ դա
գաղտնիք չէ: Տուեալ պարագայում
կարծում եմ, որ հարցերի հարցը
դա դատական համակարգի անկա-
խութեան հարցն է», - կարծիք յայտ-
նեց Վ. Դալլաքեանը՝ ընդգծելով,
որ «Հայաստանի նման երկրնե-
րում իրաւական խնդիրները լուծ-
ւում են քաղաքական հարթութիւ-
նում եւ, եթէ այսօր ՀՀ ղեկավարու-
թիւնը դրսեւորի քաղաքական կաժք,
ապա դրան կը յաջորդեն նաեւ
իրաւական քայլեր»:

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1000 ՆՈՐԱԾԻՆՆԵՐԻՑ 22-Ը ՄԱՐԱՆՈՒՄ ԵՆ ՄԻՆՉԵՒ ՄԵԿ ՏԱՐԵԿԱՆԸ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՎՅ»:
Համաձայն ԵՌԽՆԻՍԽՖ-ի (ՄԱԿ-ի
մասնական հիմնադրամ) «ԵՐԵԽԱ-
ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒճակը աշխարհում»
2009 թուականի գեկոցի, աշխար-
հի առաւել թույլ զարգացած երկր-
ներում մօտ 300 անդամ աւելի մեծ
է ծննդաբերութեան ժամանակ մա-
հանալու հաւանականութիւնը, քան
զարգացած երկրներում։ Զարգա-
ռան եւ հաջող հաջող ժամանակ Երկր

ցած երկրների համեմատութեամբ
գրեթէ 14 անգամ աւելի մեծ է
հաւանականութիւնը, որ զարգա-
ցող երկրում ծնուած երեխան մա-
հանայ կեանքի առաջին ամսում:

Ինչպէս այսօր զեկոյցը ներկա-
յացնելիս ասաց ՄԱԿ-ի մանկական
հիմնադրամի Հայաստանեան գրա-
սենեակի ներկայացուցիչ Լէյլի Մո-
շիրին, իրենց հետազօտութիւննե-
րը ցոյց են տուել, որ Հայաստա-
նում ինդիրը եւս մտահոգիչ է:

«ԲԱՐԳԱԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-Ը ԴԵՄ Է ՀԱՐԿԵՐԻ ԱՒԵԼԱՑՄԱՆ

«Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան նախագահ, Ազգային ժողովում՝ կուսակցութեան խմբակցութեան ղեկավար, Հայաստանէան խոշոր գործարարներից Գագիկ Ծառուկեանը այսօր յայտարարեց, որ իր գլխաւորած քաղաքական ուժը դէմ է համաշխարհային ճպնաժամի պայմաններում հրկրում հարկերի բարձրացմանը:

«Եթէ հարկերը այս ժամանակահատուածում աւելացնեն, մենք նորից դէմ ենք քուէարկելու», - «Ազատութիւն» ռազիոնայանին երկուշաբթից օրը ասաց Ծառուկեանը՝ պարզաբանելով. - «Որ այսօր պէտք է մենք կարողանանք հարկերը պակասեցնել, սառեցնել, որ մարդիկ կարողանան ճգնաժամից դուրս գալ: Դա մենք նորութիւն չենք ասում, դա աշխարհուով մէկ ընդունուած օրէնք է: Երբ ճգնաժամ է համաշխարհային, պէտք է մարդկանց հնարաւորութիւն տրուի, կամ որոշ օրէնքներ պէտք է սառեցուի»:

Նրա խօսքով, եթէ կառավարութիւնը միջոցներ չձեռնարկի, տնտեսական ճգնաժամը «շատ վնաս է երկրի համար»:

«Ե՛ւ վարչապետը, ե՛ւ նախագահը միջոցառումներ, ծրագրեր իրականացնում են», - յաւելեց Գագիկ Ծառուկեանը:

ՄԵՂԱՆՈՒՄ կանանց մօտ յղիութեան եւ ծննդաբէրութեան բարդութիւններից մահանալու հաւանականութիւնը, ըստ գեկոյցի, 9 անգամ աւելի մեծ է, քան զարգացած երկրներում:

«Հայաստանում, մօտաւոր հաշուարկներով, 1000 նորածիններից 22-ը մահանում են մինչեւ մէկ տարեկանը, որոնց 80 տոկոսը՝ կեանքի առաջին 28 օրուայ ընթացքում։ Այս մահերից շատերը հնարաւոր կը լինէր կանինել, եթէ երեխանները ժամանակին ստանալին անհրաժեշտ ինսամքի եւ բուժման ծառալութիւններո»։ - ասազ նա:

Հաստ Մոշիրի, Հայաստանում
այս իրավիճակին նպաստող գոր-
ծօններից են ոչ բաւարար նա-
խածննդեան եւ նորածնային խնամ-
քը, որակեալ անձնակազմի եւ անհ-
րաժեշտ սարքաւորումների պա-
կասը եւ կանանց համար այդ
ծառայութիւնների անմատչելիու-
թիւնը:

Առողջապահութեան փոխնախարար Թաթուլ Յակոբեանի պնդմամբ, բոլոր այն քայլերը, որոնք իրականացնում է առողջապահութեան նախարարութիւնը՝ յդիների անվճար խնամքն ու հետագոտութիւնները, անվճար ծննդովնութիւնը, կը նպաստեն նորածնացին մահացութիւնների թուի նուազմանը:

«Հայաստանի մարզերում մահացութիւններն աւելի շատ են, քան քաղաքներում: Ինչպէս նշուած էր գեկոյցում, Հայաստանում մահացութեան ցուցանիշները 3 անգամ աւելի բարձր են աղքատ ընտանիքներում, քան ապահովուած»», - յաւելից նա:

LntR

ԽԱԻՆԵՐ ՍՈԼԱՆԱ.

«ԴԱՐԱԲԱՂԵԱՆ ՅՎԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՌԱԶՄՎԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԳՈՅՉՈՒԹԻՒՆ ՀՈՒԽԻ»

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՌԱՏԻՎ»:
«Եւոնալին Ղարաբաղի հակամար-
տութեան ռազմական լուծում գո-
յութիւն չունի: Դա պէտք է յատ-
կապէս ակնյացտ լինի վրաստանեան
ճնաժամից յետոյ», - յայտարարել
է Եւրամիութեան արտաքին քաղա-
քականութեան եւ անվտանգութեան
հարցերով գերագոյն յանձնակատար
Խալիկը Սոլանան Day.az էլեկտրո-
նալին պարբերականին տուած
հարցագրութում:

«Աղդ իսկ պատճառով, մենք
մեծ նշանակութիւն ենք տալիս այն
փաստին, որ Աղբբեջանի եւ
Հայաստանի նախագահները ան-
ցած տարի Մոսկուացում կայացած
եռակողմ հանդիպման ժամանակ
պարտաւորուեցին հակածարտու-
թիւնը լուծել խաղաղ ճանապար-
հով», - ասել է եւրոպացի քարձ-
րաստիճան պաշտօնեան՝ յաւելե-
լով. - «Նոր դինամիկան պէտք է
պահպանել որոշակի քայլերով»:

«Եւրամթիւնը լիովին սատարում է եԱՀԿ-ի Մինսկի խմբի ջանքերին եւ պատրաստ է օգնութիւն ցուցաբերել ժողովուրդների միջեւ կատահութեան ամրապնդան եւ շփուծների կազմակերպման ուղղութեամբ միջոցառումների անցկացմանը», - նշել է Սոլյանան եւ կատահութիւն յատնել, որ «բանակցութիւնների ճանապարհով ձեռք բերուած որոշումը կը նպաստի տարածաշրջանում կայունութեան, անվտանգութեան եւ առաջրնթագի հաստատմանը»:

«Ճնշամբար կատարեալ»:
«Ճնշամբար Վրաստանում
ցնցում էր ամբողջ Հարաւային
Կովկասի համար», - ընդգծել է
Եւրամիութեան յանձնակատարը: -
«Այս ցոյց տուեց, որ չլուծուած
հակամարտութիւնները վտանգա-
ւոր են նոյնիսկ տարիներ անց, եւ
որ հակամարտութիւնների կար-
գաւորումը ռազմական ճանապար-
հով նպատակայրամար չէ: Այն



**Եւրամիութեան գերագոյն
յանձնակատար Խաւիէր Սոլանա**

ցոյց տուեց նաեւ, թէ որքան փոխ-
կախուած եւ զգայուն են տարա-
ծաշըջանի երկրները, եւ ի յայտ
բերեց տարածաշըջանում դիսա-
միկայի լիակատար փոփոխու-
թեան անհրաժեշտութիւնը»:

«Օգոստոսին իրադարձութիւններին Եւրամիկութեան անյապաղ արձագանքից եւ Վրաստանին մեր ուժեղ աջակցութիւնից յետոյ կասկած չի կարող լինել, որ մենք մեծ նշանակութիւն ենք տալիս Հարաւային Կովկասին, ինչը ապացուցում է նաեւ մեր առաջարկած Արեւելեան գործընկերութեան նախաձեռնութիւնը», - յայտարարել է Խաւեհը Սոլանան:

«Մենք ցանկանում ենք սեր-
տորէն համագործակցել տարածաշր-
ջանի երկրների, ինչպէս նաև
Ռուսաստանի, Թուրքիայի եւ ԱՄՆ-
ի հետ։ Տարածաշրջանի բոլոր
երկրների հետ դրական եւ կառու-
ցողական երկխօսութեան անցկա-
ցումը մենք համարում ենք հիմ-
նական ճանապարհը դէպի կայու-
նութիւն, անվտանգութիւն եւ առա-
ջընթաց։ Կը ցանկանայի ընդգծել
Թուրքիայի դերը եւ Թուրքիայի
ու Հայաստանի միջեւ յարաբերու-
թիւնների բարելաւման նպատա-
կով ձեռնարկուած վերջին քայլե-
րի կարեւորութիւնը», - ասել է
Եւրամիութեան յանձնակատարը։

ՀԱՅԵՐԸ ՆԵՐՈՂՈՒԹՅԻՒՆ ԵՆ ԽՆԴՐՈՒ ԹՈՒՐՔԵՐԻՑ...

Թուրք մտաւորականների կողմէից նախաձեռնած «Հայոց ցեղասպանութեան համար համբարձից ներողութիւն ինողրեկլու» ինստերնետացին արշաւը «համարժէք պատասխանի է արժանացել», գրում են թուրքական լրատուամիջոցները: Մի խումբ հայր ի յայտ են եկել համամատան նախաձեռնութեամբ, որի միջոցով ներողութիւն են ինողրում թուրքերից «Ասալա» խճանարձան կողմէից իրականացրած սպանութիւնների համար:

Սիդնեյի Մակրուսարի համալ-
սարանի գոկտոր Արմէն Կաքաւեա-
նը, ով նաեւ հանդիսանում է «Հայ-
թուրքական երկիոսութեան խմբի»
համանախազագհը, նախաձեռնել է
թուրքերից ներողութիւնն ինպես լու-
վերոնշեալ արշաւը: Ինչպէս նշել է
Կաքաւեանը «Ռադիկալ» թուրքա-
կան թերթին տուած հարցազրոյ-
ցում, հայերը կը կարողանան
գետեղել իրենց ստորագրութիւննե-
րը տուեալ փաստաթղթի տակ
արդէն յաջորդ շաբաթ: «Այս ար-
շաւի միջոցով մենք ցոյց կը տանք
մեր ի սրտէ աջակցութիւնը մեր
թուրք ընկերների կողմից նախա-
ձեռնուած ներողութեան արշա-
ւին», - նշել է Կաքաւեանը: Հայերի
յայտարարութիւնում նշուելու է.
«Ես ներողութիւն եմ ինպրում
թուրքերից այն սպանութիւնների

Համար, որոնք իրականացուել են
հայ ժողովրդի անունից, եւ ես
կարեկցում եմ թուրքերի ցաւին»:

Կաքսւեանի խօսքերով՝ թուրք
մտաւորականութեան արշաւը ոգէն-
չելէ իրեն նախաձեռնել համանման
ջանքեր՝ «թուրք մտաւորականու-

թեան քայլը մեծ նախաձեռնութիւն էր, վեհանձնութեան ապացուց, քանի որ գժուար է առերեսել անցեալը: Թէ՛ որպէս մէկ անձ, թէ ժողովուրդ ես յոյս ունեմ, որ հայերը իզօրու են ի ցոյց դնել միեւնոյն համարձակութիւնը, ինչպէս եւ թուրքերը, եւ առերեսել անցեալի մութէշերը», - նշել է Կաքաւեանը:

Ծըշցմանք, որ թուրք ստահե-
րականութեան կողմից ինստերնետա-
լին կայքում զետեղուած ներողու-
թեան տեքստը հետեւեալն է. «իմ
խիդը չի ընդունում «Մեծ ողբեր-
գութեան» Նկատմամբ ցուցաբերուող
անտարերերութիւնը եւ հերքումը,
որին ենթարկուել են Օսմանեան
կայսրութեան հայերը 1915թ.: Ես
չեմ ընդունում այդ անարդարու-
թիւնը եւ իմ անունից ցաւում եմ իմ
հայ եղբայրների եւ քոյլերի ցաւե-
րի եւ տառապանքների համար: Ես
ներողութիւն եմ խնդրում իրեն-
ցից»: Թուրք մտաւորականութեան
նախաձեռնութեան տակ ստորագրել
է աւելի քան 30 հազար մարդ:

ԴԱՎՈՍՈՒՄ ՀԱՆԴԻՊԵԼ ԵՆ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԸ ԵՒ ՌԵՋԻՓ ԷՐՂՈՂԱՆԸ

Դավոսի Համաշխարհային
տնտեսական համաժողովի ըրջա-
նակներում հանդիպել են Հայաս-
տանի նախագահ Սերժ Սարգսեա-
նը եւ Թուրքիայի վարչապետ Ռե-
ջէփ Էրդողանը:

«Ասոյինքիթեղ փրկս» լրատ-
ուական գործակալութեան փոխանց-
մամբ՝ Հայաստանի նախագահը

ԻԼՅԱՄ ԱԼԻԵՒ. «ԿԱՅ ԳՈՐԾԸՆԹԱՑ, ՈՐՈՇՎԿԻ
ԱՌԱՋԸՆԹԱՑ, ՍԱԿԱՅՆ՝ ՈՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐ»

Նախագահ ԻլիամԱլիեւ

այդ քննադատութիւնը հիմնականում կողմնակալ է»:

«Եթէ նայէք մեր տարածաւը-
ջանին, կը տեսնէք, որ հարեւան
երկրները, որոնք իրենց ժողովր-
դի նկատմամբ կուպուրէն ոտնահա-
րում են մարդկային տարրական
իրաւունքները, քննադատութեան

ԱԻՍ ՏՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ԵՐՏՈՂԱՎԻ ՏԱՒՆԵԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹԻՒԾԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՆԴՐԱՌԱԶԵՐԸ

ՏՕՔԹ. ՀԱՄԲԻԿ ՍԱՐԱՖԵՍՆ

Թուրքիոյ վարչապետ Ռենեպ Թայիպ էրտողանի՝ Զուլիցերիոյ Տաւոս քաղաքի մէջ ընթացող Համաշխարհային Տնտեսական Համաժողովի շրջանակներէն ներս՝ Միջին Արևելքի հարցերուն նուիրուած քննարկումը կտրուկ կերպով ընդհատելն ու հեռանալը խորաքի ցնցած ըլլալ կը թուի հսրայէլի եւ արտասահմանի հրեաները, որոնք արդեն իսկ գոհ չըլլալով իրենց ուազվավարական դաշնակիցի՝ Կազայի վերջին իրադարձութիւններուն կապակցութեամբ իսրայէլի հասցէին հնչեցուցած սուր քննադատութիւններէն, բոլորովին չէին ակնկալէր նման անվայել վերաբերնունք նման բեմահարդակի վրայ: Անմիջապէս արձագանքելով, անոնք մէկ կողմէն մեղադրեցին էրտողանը եւ անոր վարչակարգը՝ թուրքիոյ մէջ հակասենական տրամադրութիւնները քաջալերելու ու հանդուրժելու մէջ եւ միւս կողմէն սպառնացին ոչ միայն իտ այսու չխոչընդոտել՝ Ամերիկան Գոնկուէսն ներս Հայկական Յեղասպանութեամբ տարուած աշխատանքներուն, այլ հսրայէլի մէջ պաշտօնապէս ճանչնալ Յեղասպանութիւնը : Իսկ Հայաստաննեան եւ տեղական հայատառ մամուլի մէջ զերակոռող կարծիքը այն էր, որ էրտողան իր այդ անքաղաքավար եւ երկրի մը բարձրասատիճան պաշտօնեային անվայել արարքով մէծ վնաս հասցուց թուրքիոյ համաշխարհային վարկին եւ անդառնալիօրէն խարիւց՝ թուրքիայ- իսրայէլ մուր դաշնքն ու համագործակցութիւնը, մանաւանդ Յեղասպանութեամ ճանչման աշխատանքները խափանելու գործին մէջ:

Սակայն մինչ մեր «Սրտերու յոյսով լեցուիլը», որ յաղթանակը մօտալուտ է, կ'արժէ նախ եւ առաջ ընբունել թէ էրտողանի ըրածը պարզապէս անտաշ Արեւելքի սալմաքում է՞ր թէ քաղաքական խորածանկ քայլը, որ ուզմապարական հեռահար նապատակներ կը հետապնդէ: Հակուած ենք մտածելու, որ վերջինն է ճիշտը:

Թուրարկենք պատճառները՝
Ա. Թուրքիայ, տարիներ շարունակ կը փորձէ խաղալ տարածաշրջանի գերաժեռութեան դեր եւ ացդ առումով զանագան նախաձեռնութիւններ առած է, Արաբ-իսրայէլեան հարցերու կարգաւորումն մինչեւ կովկասեան կայունութեան եւ անվտանգութեան հաստատման գործընթաց: Սակայն ի հեճուկս թուրքիոյ, Սուլիհասրայէլեան բանակցութիւններուն իր միջնորդական առաքելութիւնը ապարդիւն եղաւ, ի թիւս այլ դժուարութիւններու, նաեւ այն հանգամանքին համար, որ թուրքիոյ

նկատմամբ առանձնապէս վատահութիւն չկայ արաբական աշխարհի մէջ, գլխաւորաբար իսրայէլի եւ Ամերիկայի հետ ունեցած սերտ յարաբերութիւններու պատճառուաւ: Այս տէսանկիւն նէն դիտած, էրտողանի քայլը զինք ակնժմարթօրէն հերոսացուց արաբական աշխարհի մէջ եւ օգնեց ստեղծելու այս պատրանքը, որ թուրքիան է միակ պաշտպանը պահետիւննեան ժողովուրդի շահերուն, ի տես արաբական պետութիւններու մասնաւորապէս եզրիպուսի, Յորդանանի եւ Սէուտական Արաբիոյ թուացեալ անզօրութեան՝ ի դէմ իսրայէլեան բիրտ ուժին: Նոյնիսկ իրան, որուն համար այնքան ալ նպաստավոր չէ թուրքիոյ վարկի կտրուկ բարձրացումը արաբական աշխարհի մէջ, պարտաւորուցաւ շնորհաւորել էրտողանի՝ իբրեւ թէ «Արի» քայլը:

Բ. Արաբական տերութիւններուն համար առանձնապէս չի մտահոգէր թուրքիոյ նկատմամբ իրենց քաղաքացիներու համարումը, որովհետեւ ի տարբերութիւն իրանի, թուրքիայ, բայց ի տնտեսական նկատառումներէ, հետաքրուած չէ եւ հարաւորութիւնը չունի քաղաքական կամ զաղափարական ազգեցութեան զոտիներ ստեղծելու զանազան արաբական երկիրներու մէջ, ինչպիսին աջօր ստեղծած է իրան, ի դէմ չըզպալլայի, համասի, եւ այլ ծիի դաւանանքի յետեւորդներուն, որոնք իրենց կրօնական պատկանելիութեամբ շատ առելի հաւատարիմ եւ մօտ են իրանին, քան թէ իրենց, մեծամասնութեամբ Միւննի, իշխանութիւններուն: Այնպէս որ, թուրքիոյ դերի բարձրացումը տարածաշրջանին ներս, նախ եւ առաջ ձեռնոտու է արաբական երկիրներու տիրակալներուն, որովհետեւ անոր մէջ կը տեսնեն այն հակակոռը, որ պիտի կարենայ իրանի շրջանային նկրտումները ասմանի:

Գ. Կարեւոր է նշել նաեւ այն դրական արձագանքը, որ այդ արարքը ճգեց թուրքիոյ հասարակութեան վրայ, մանաւանդ ազգային արժանապատութեան առումով: Դատելով էրտողանի թուրքիայ վերադարձին՝ բազմազարք քաղաքացիներու կողմէ՝ հերոսի մը համար վերապահուած ընդունելութեան, դժուար չէ կուահել թէ թուրքիոյ յառաջիկայ ընտրութիւններուն, ինչպիսի յաջող արդինքներ պիտի ունենան էրտողան եւ իր պատկանած կուսակցութիւնը:

Դ. Հակուակ հրեական ներկայ բուռն հակագղեցութեան, որոշ ժամանակ անց, երբ գլուխները քիչ մը հանդարտին, իսրայէլի եւ ընդհանրապէս հրեաներուն համար համեստ պիտի դառնայ, որ լաւ թէ վատ, թուրքիայ կայ եւ կը մնայ տարածաշրջանի մէջ իրենց միակ ու անփոխարինելի բարեկամ երկիրը:



արարքը, հեռաձայնային խօսակցութիւն մը ունեցած էր էրտողանի հետ եւ ըստ լուրերու, որոնք իսրայէլ կը ժխտէ, ներողութիւն ինդրած էր պատահարին համար: Ինչպիսին ալ եղած ըլլայ խօսակցութեան բնոյթը, վստահաբար, Շիմօն Փէրէզ, ունենալով քաղաքական երկարածուած էր ի գիտակցի, որ այս դէպքը, տգեղ ըլլալով հանդերձ, ապագային պիտի ունենաց իրական անդրադարձը:

Իսկ եթէ ոոյնիսկ իսրայէլ եւ Ամերիկայի հրեական լովին ի կատարածնեն՝ Հայկական Յեղասապանութեան ճանաչման վերաբերեալ իրենց սպառնալիքները, ապա միեւնոյննէ, թուրքիոյ համար հրեական լովիի նեցուկը այսօր նոյն նշանակութիւնն ու կարեւութեանը չունի, որ ունէր վեց ամիս առաջ, նախքան Հայաստան-թուրքիայ դիւանագիտական ապացակալ:

Ինչպէս կը տեսնենք, բայց դիւանագիտական բայցը բայց սպառովի ու պարզուի ու պատրիարքական պահանջման մը պարզուի շարքին: Պատահական չէ, որ դէպքեն անմիջապէս յետոց, իսրայէլի նախագահ՝ Շիմօն Փէրէզ, որուն ելոյթն էր որ դրած էր այդ կ'ըսէ... Կ'ապրինք կը տեսնենք:

**Կազմակերպութեամբ՝
Նոր Սերունդ Մշակութային Միութեան**

**Դասախոսական երեկոյ
նորիրուած՝
Վիրթոր Համբարձումեանի
Ծննդեան 100-ամեակին**

**Դասախոս՝
Ճարտարագէտ Սահակ Թութեան**
(PowerPoint presentation)

Տեղի կ'ունենայ
Որբաթ, Փետրուար 13, 2009

Երեկոյեան ժամը 8-ին

Ալենտելի Կելորոնական Գրադարանին մէջ
222 East Harvard Street, Glendale

Մոռոր ազատ

Հիրասիրութիւն

ՏՏՒԷՔ
ԵՐԵ

BANKRUPTCY-Ի
ՕՐԵՆՔՆԵՐԸ
Կ'ՕԳՆԵՑ ՁԵԶԻ,
ԶԱՆԳԱՐԱՐԵ

JANSEZIAN LAW FIRM, PC

If you're facing overwhelming debts, bankruptcy laws may eliminate all your debts permanently!

225 South Lake Avenue, Third Floor, Pasadena, California 91101

Call Now for a FREE Consultation: 626-432-7209



Nazareth V. Jansezian, Esq.

ՕՊԱՄԱ ԵՒ ԻՐԱՆ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍԱՂՐԵԱՆ

Նախագահ Պարաք Օպամայի նախկին Պուլչեան իշխանութեանէն ժառանգած լուրջ հարցերէն մէկն ալ, եթէ ոչ լրջագոյնը, Մահմուտ Ահմետինենատի իրանն է, որուն հետ ամերիկեան նոր արտաքին քաղաքականութիւնը պէտք է զբաղի: Օպամայի իշխանութեան արտաքին քաղաքականութիւնը ներկացիս կը գտնուի երեք անձերու ձեռքերուն մէջ, Հիլլրի Գլինթըն, Նշանակեալ նոր արտաքին գործերու նախարարը, փոխնախագահ ծօ Պայտըն, որ արդէն յատուկ առաքելութեամբ մը իր նոր պաշտօնը անմիջապէս ստանձնելէ ետք գործուղղուեցաւ ֆաքիստան եւ Աֆղանիստան, եւ անշուշտ ինքը, նախագահ Պարաք Օպաման: Նաեւ պէտք է ամէն մարդ նշանարած ըլլայ, որ Օպամա, առաջին առթիւ նախքան ամերիկեան եւ այլ լրատու գործակալներէն առաջ, յատուկ հարցագորոյց մը ունեցաւ Սէուտայական «Ալ-Արապիյա» կոչուած կայանին հետ, եւ յատակօրէն խօսքը ուղղելով արաք եւ իսլամ ժողովուրդներուն, կը խոստանար, «յարգանքի եւ հասկացողութեան» մթնոլորտի մը մէջ, գործակցութիւն հաստատել: Մանաւանդ շեշտը դրաւ այն իրողութեան վրայ, որ «Ամերիկան չնկատեն իբրեւ թշնամի երկիր»:

Արդէն իսկ ընթերցողները
անդրադարձած պէտք է ըլլան որ
երկու փորձառու եւ ծանօթ ամե-
րիկեան քաղաքական դէմքեր, ծօրճ
Միչըլ եւ Ռիչըլը Հօլվուուք,
արդէն իսկ նշանակուած են կարե-
ւոր առաքելութիւններ կատարե-
լու, առաջինը Մերձաւոր Արեւել-
քի մէջ, իսկ երկրորդը Փաքիս-
տան եւ Աֆղանիստան։ ծօրճ Մի-
չըլ արդէն իսկ կը զտնուի Մեր-
ձաւոր Արեւելք, նոր եւ շինարար
վերլուծում մը գտնելու շուրջ 60
եւ աւելի տարիներ տեսած արաբ-
իսրայէլեան տագնապին, որուն
նորագոյն բռնկումը կը հանդի-
սանայ համաս-իսրայէլ ընդհա-
րումը։ Պէտք է յստակ ըլլաց
ամէնուն որ արաբ-իսրայէլեան
հարցը առաւել կամ նուազ ու-
շադրութեան արժանացած է ամե-
րիկեան իրերայաջորդ իշխանու-
թեանց կողմէ, որոնցմէ առաւելա-
բար Պիլ Գլիբնթընն էր որ բա-
ւականին լուրջ արդիւնքներու
պիտի համնէր, եթէ յարուցուած

գժուարութիւնները արգելվ չեն-
դիսնային: Իսկ ձօրճ Պուշին իշ-
խանութիւնը որոշապէս փրօ-իս-
րայէլնան դիրքորոշում ունէր, եւ
տրուած ըլլալով իր ստեղծած
խնդիրները, երկու պատերազմ եւ
տնտեսական լուրջ տագնապ, այդ
իշխանութիւնը պատմութեան ան-
ցաւ, առանց շօշափելի արդիւնք-
ներու:

ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔ ԵՒ ԻՐԱՆ

Եթէ սկզբնական տասնամբ-
եակներուն, արաբ-իսրայէլեան
գատնապը կը գրաւէր մասնացա-
տուկ շրջան եւ երկիրներ, վեր-
ջին քանի մը տարիներուն, Մեր-
ձաւոր Արեւելեան հարցը առաւել
եւս բարդացաւ շրջանէն ներս
յայտնութեամբը իրանի, յատկա-
պէս անոր նոր ղեկավարութեան
օրով: Այժմու իրանեան պետու-
թիւնը, ղեկավարութեամբ Մոլ-
լաներու եւ Մահմուտ Ահմետինե-
ճատի շատ աւելի ազդու ներկա-
յութիւն մը կը հանդիսանայ շրջա-
նէն ներս, այնքան մը որ հիմնա-
կան ղերակատարներէն մէկն է
բոլոր տազնապներու թէ ծագման
եւ թէ լուծման համար: Այսպէս,
իրան եւ իր ղեկավարութիւնը ոչ
միայն քաղաքական, այլ նաև շինուորական, տնտեսական եւ ան-
շուշտ կրօնական լուրջ ղերեր կը
խաղան ամբողջ շրջանէն ներս:
Իրաքի պարագային, իրան կշռող
ազգեցութիւն ունի իրաքի շիհ
զանգուածին վրայ, որ իրաքի
բնակչութեան 60 տոկոսը կը հաշ-
ուէ, եւ երկրի կառավարութեան
ղեկը յանձնուած է շիհ ղեկավարի
մը: Այս պարագան իրան որեւէ
ատեն կրնայ իրեն ի նպաստ
օգտագործել, մանաւանդ գոյու-
թիւն ունի յատուկ բանակ մը եւս,
Ալ-Սամարի ղեկավարութեամբ,
բանակ որ կրնայ որեւէ ատեն
հարց ստեղծել, ըլլայ դրական եւ
ըլլայ ժխտական իմաստներով:
Առ այժմ, իրաքի կացութիւնը,
հակառակ որոշ հանդարտեցումի,
եւ նոր կարգադրութեանց, կը
մնայ անորոշ: Հարց է թէ Օպա-
մայի խոստացած ամերիկեան զօր-
քերու տունդարձը մէկ ու կէս
տարիներու ընթացքին ե՞րբ պի-
տի սկսի, երբ կրնայ շարունակ-
ուիլ առանց լուրջ արգելիքի, եւ
որքան պէտք պիտի ըլլայ ամե-
րիկեան ներկայութիւն մը իրա-
քէն ներս: Ուրեմն իրանեան ազ-
դեցութեան մէկ օլակը իրաքն է,

ՎԵՐՈՊԻՉԵԿԱԼ մանրամասնութիւններով:

իրանեան լուրջ եւ նկատելի ազգեցութիւններ են Լիբանանի եւ Կազախի մէջ գործող «Հըզպալ-լա» եւ «Համաս» կազմակերպութիւնները, որոնք, գէթ ամերիկ-եան տեսանկիւնէն դիտուած, «ահաբեկչական» կը նկատուին։ Այս երկուքին հետ ալ Խորացէլի խնդիր ունեցաւ, Հըզպալլայի հետ 2 տարի առաջ, որը վերջացաւ Խորացէլի հզօր բանակի պարտութեամբ, իսկ Համասի հետ տակաւին շարունակուող տագնապը որ չտոկար համաձայնուած զինադադարներու։ Խորացէլ կը դիմէ խստագոյն հակահարուածի, երբ Կազախն Համասի մարդիկը հրթիւներ արձակեն Խորացէլեան քաղաքներու վրայ։ Ճօրծ Միջըլ պահանջեց որ Համաս լման դադրի հրթիւ արձակելէ, որպէսզի հիմնական վերջ մը գտնուի Կազա-իսրայէլ հարցին, սպասելով շատ աւելի մեծ, արաբ-իսրայէլ-եան հարցի լուծման։ Թէ Հըզպալլան, եւ թէ Համասը կը վայելեն Իրանի հոգատարութիւնը, թէ տնտեսական, եւ թէ մանաւանդ զինուորական իմաստով։ Հըզպալլան, Լիբանանի մէջ, ներկայիս կը նկատուի կառավարութիւն մը կառավարութենէ ներս, եւ քաղաքական լուրջ ներկայութիւն մը կը նկատուի, զոր կարելի չէ ամենեւին անտեսել։ Լիբանանի ճակատագիրը մեծ մասամբ ներկայիս կախեալ է Հըզպալլայի խաղացած կամ խաղալիք գերէն, այլ երկրէն ներս։

ինչ կը վերաբերի Համասի, ան արդէն տիրող իշխանութիւնն է կազայէն ներս, երբ յաջողեցաւ Մահմուտ Ապահասի, «Ֆաթհի» ուժերը դուրս քշել կազայէն եւ հոն հաստատելիր իշխանութիւնը: Յստակ չէ ներկայիս թէ ինչպէս Համաս եւ Ապահաս պիտի կարենան իրենց դժուարութիւնները հարթել եւ միանալ պաղեստին-եան իշխանութեան մը ծիրէն ներս: Այս հարցերը կը մնան ճշգելի ձօրճ Միջըլի եւ Օպամայի իշխանութեան: Ներկայիս, յստակ չէ թէ իրան ինչպէս պիտի վերաբերի Հրզպալլա եւ Համաս երեւոյթներուն, որոնք կարեւոր խաղաղողներ կը մնան Միջին Արեւելեան թատերաբեմի վրայ:


Եթէ ակնարկ մը նետենք անցնող քանի մը տարիներու վրայ, եւ ի մտի ունենանք ամերիկեան օգնութիւնը եւ միջամ-

Ներու վրայ, պիտի տեսնենք թէ
Ամերիկան գրեթէ ոչինչ կրցաւ
ընել Հիբանանի վարչապետ Յուլատ
Սինիորայի, եւ Վրաստանի նա-
խագահ Սաաքաշվիլի օգնութեան
հասնելու տեսակէտէն, եւ այդ եւ
ուրիշ երկիրներ լաւ կը ճանչնան
Ամերիկայի թէ խոստումները, եւ
թէ այդ խոստումներու դատար-
կութիւնը:

Կը համնիմ իրանի հետ կապուած ամենէն լուրջ հարցին, այսինքն իրանի հիւլէական ուժի տիրանալու ճիգին, ճիգ որ նաեւ Ամերիկայի եւ Խորացէլի համար, կը նկատուի, կամ կը բացատրուի հիւլէական ոռումքի մը կարելիութեամբ կամ ստեղծումով։ Իրան ներկայիս կը շարունակէ հիւլէական ուժի զարգացումը, օգնութեամբը Ռուսաստանի, Զինաստանի եւ նոյնիսկ Փաքիստանի, որուն հիւլէական զիտնականներէն մէկը նոյնիսկ բարեկամ կը նկատուի իրանի։ Մանաւանդ եթէ նկատի առնենք որ իրան ոչ միայն հովանաւորն է Հըզպալլայի եւ Համասի, այլ պարբերաբար, Ահմետինեճատ կը սպառնաց «Խորացէլը ջնջել Մերձաւոր Արեւելքի քարտէսէն», իրան իսկապէս լուրջ վտանգ կը հանդիսանաց ամերիկեան եւ անշուշտ, իսրայէլեան շահերուն։ Ներկայիս յստակ չէ թէ ո՞ւր հասած են իրանի փնտուառքները հիւլէական մարդէն ներս, եւ թէ ե՞րբ իրան պիտի կարենայ հիւլէական ոռումք մը ձեռք ձգել, եթէ անշուշտ, մինչ այդ, իրեն արտօնուի այդ։ Վերջերս իմացանք որ իսրայէլ ուզած է իրանի վրայ օդային ոմքակոծում ընել հիւլէական կեղրոններու վրայ, եւ սակայն Պուշ չէ արտօնած։

Հիմնական հարցը հոն է որ
իրան ինչպէս պիտի դիմաւորէ
Ամերիկայի, Խորացէլի եւ Եւրո-
պական կարգ մը Երկիրներու
ընդդիմութիւնը իր հիւլէական
հետազոտութեանց, որոնք ուշ կամ
կանուի կրնան համնի հիւլէա-
կան ուռմբի ստեղծման: Անցեա-
լին, ուղղակի եւ ՄԱԿ-ի միջոցաւ
հրահանգուած պատժամիջոց-
ներուն (*sanctions*) ականջ չկա-
խեց իրանեան ըեժիմը: Սակայն
այն տպաւորութիւնը կայ որ այդ
ըեժիմը զգայուն է այդ միջոցնե-
րուն, իր ներքին կացութեան
ապահովաման:

Ինչպէ՞ս Օպամա պիտի վարուի իրանի հետ, դիւանագիտօրէնթէ ուժի ցուցադրութեամբ, այս է



ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՆԲՐԱՋԵՑՏ է

ԵՐԻՔ ՈՒԾ ԶԵ ՎԵՐԱԲՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱԽՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

mtsrnu wurautuu

818 500-9585 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205
E-mail: BMaronian@AOL.com **ONE EIGHT HUNDRED FOUR "HAI-TAD"**



ԳԱՂՈՒԹԱՅԻՆ

«ԵԶՄԻԱԾՆԻ ԵՐԵԽԱՎԵՐՈՒ ՖՈՆՏ»Ի ՏԱՐԵԿԱՆ ԿԱԼԱԱՆ

ՏՕՔԹ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Հայաստանի Երեխաներու Օգոստական շնորհակալ ծառայութեան կոչուած «էջմիածնի Երեխաներու ֆոնտ» ի Տիկնաց Միութեան Տարեկան ծաշկերոյթ Կալան տեղի ունեցաւ Ուրբաթ 23 Յունուար 2009-ին, Երեկոյան ժամը 7,30-էն սկսեալ, Universal Hilton-պանդոկի շքեղ հանդիսարահներէն մէկուն մէջ:

Ներկայ էին շուրջ 350 հայ եւ օտար հրատիրեալներ, որոնք եկած էին նիւթափէս եւ բարոյակէս իրենց նեցուկը յախնելու Ս. էջմիածնի հովանաւորութիւնը վայելող համանուն բարեխրական միութեան, որ ազգային հրապարակի վրայ կը գտնուէր այսօր աւելի քան չորս տարիներէ իշեր:

«էջմիածնի Երեխաներու ֆոնտ»ը հիմնուած է նիւթափէս եւ կրթական գետնի վրայ իր մասն հոգատարութեան տակ առնելու մէր հայրենի մանուկ պատանի հասակ առնող այն սերունդները, որոնք կը գտնուէին անցուկ պայմաններու մէջ: 1988 թ. հայրենաքանդ Երկրաշարժը, ծանր արժած էր հայրենի, արդէն իսկ կեանքի դժուարին պայմաններու տակ գտնուող, եւ իր բախտին լքուած ժողովուրդի վրայ:

Սփիւռքահայ բարեխրական միութիւններ, ինչպէս «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն»ը, հիմնական գործօններն են կառուցողական եւ մարդասիրական շնորհակալ առաքելութեան: Սրբ. էջմիածնի բարձր հովանաւորութեան տակ, հայ եկեղեցին, իր կարգին, քանի մը տարի է օգնութեան ձեռք կ'երկարէ իր կարելիութեան սահմաններուն մէջ: Ան կ'աշխատի օգնել մէր հայրենի որբ, չքաւոր եւ անուս պայմաններու տակ ապրող նորահաս սերունդներու: Կ'առաջադրէ բարեխաւել մօտ հազար Երեխաներու կեանքը, նիւթափէս, հոգեւորապէս եւ ունումնականորէն, մասնաւորաբար էջմիածնի շահնակէն ներս:

Միութեան վարչութեան անդամներէն տիկ. Հերմինէ ձանոյեանի բարի գալուստի խօսքէն ետք, բեմ հրաւիրուեցաւ «էջմիածնի Երեխաներու ֆոնտ» ի Տիկնաց Միութեան վարչութեան Ատենապետուհի, Տիկ. Կայանէ Առաքելեան-թաթուլեան:

Ան յետադարձ ակնարկ մը նետեց ամսեալ Սեպտեմբերին, Միունոն Օրհնէքի առիթով Հայաստան տուած իր հոգեպարար այցելութեան վրայ: Յուզումով անդրադարձ մէր իր բերքութեան վայրէն մէջ: Ան կոչ ուղղեց նիւթափէս օժանդակել միութեան, ինչ որ մէծ փոփոխութիւն պիտի բերէ մէր Երեխաներու կեանքին մէջ: Մեր Երեխաները պիտի կարենան ածիլ եւ զարգանալ պատուի միջավայրի մէջ: Տիկ. Ատենա-

պետուհին շնորհակալութիւն յայտնեց իր վարչութեան անդամուհիներուն, ժողովներու, տրամադրած ժամանակին եւ հանգանակային աշխատանքին համար:

Ան, նաեւ, ողջունեց Կալայի ներկաներէն, պատուոյ Հիւր՝ Տիկ. Մարի Տա Սիլվան, որ միջազգային համբաւի տիրացած էր իր մայրենի երկիր, Մալաւիի որբերուն իր բերած ամբողջական ծառայութեան համար:

Ան, նաեւ, ողջունեց Կալայի ներկաներէն, պատուոյ Հիւր՝ Տիկ. Մարի Տա Սիլվան, որ միջազգային համբաւի տիրացած էր իր մայրենի երկիր, Մալաւիի որբերուն իր բերած ամբողջական ծառայութեան համար:

Տիկ. Մարի Տա Սիլվան խօսք առնելով, անդրադարձաւ իր տարած մարդասիրական առաքելութեան մասին: Հոն, Մալաւի, իր անձնական ապարանքին մէջ, ի՛ր միջոցներով բացած է դպրոց մը, ուր ձրիաբար կ'աշակերտէին 350 կարիքաւոր Երեխաներ եւ կը պաշտօնավարէին 14 ուսուցիչներ: Տիկ. Մարի Տա Սիլվա, ներկայիս կ'աշխատէր CNN-ի մէջ եւ իր ամսական եկամուտը կը յատկացնէր իր սեփական սուն-դպրոցին: Ան կը գտնէր, թէ ամէն Երեխայ կարօտ էր սիրոյ, հոգածութեան եւ ուշադրութեան: «Երեխաները պէտք ունին գիտալու, թէ իրենք Աստուծոյ կողմէ տրուած պարզեւներ են: Կ'ուզեմ, որ անոնք ունենան աւելի լաւ ապագայ:»

«Հովանաւոր՝ Բարեջան Առաջնորդ Յովինան Արք. Տէրտիկը-եան բարձր գնահատեց Արեւմտեան թեմի «էջմիածնի Երեխաներու ֆոնտ»ի Տարեկան ծաշկերոյթ Կալան, «որ Աստուածահաճոյ առաքելութիւն մըն է» ըստ ան: Ան կ'օգնէ Հայաստանի կարիքաւոր Երեխաներուն: Մրբազանը իր գոհունակութիւնը յայտնեց, որ ֆոնտը իր ջանքերը եռապատկած է վերջին տարիներուն, եւ գնահատեց միութեան անձնակազմը, եւ Երեկոյին մասնակից ամէն հայորդի՝ հրաւիրելով բոլորը՝ «ունենալու հայրենի Երեխայ մը որդեգրելու հպարտութիւնը»: Մրբազան Հայը յատկ ուշադրութեան առարկայի դարձուց Տիկ. Մարի Տա Սիլվան: Ան բարձր գնահատեց անոր մարդասիրական նուիրումը: Օրհնեց ու պարգեւատրեց զայն:

Օրուան հանդիսավար՝ Մարքիրակոս, ինչպէս միշտ, իրեն յատուկ գուարթախօսութեամբ եւ ձեռնհասութեամբ, գուարձացուց մթնոլորտը: Իր եւ իր գործակիցի խոստում-յանձնառութեամբ սկսած խոստում-յանձնառութիւններու արշաւը, խանդավառեց Երեկոն: Մեծ էր թիւը անոնց, որոնք իրենց նիւթական հոգատարութեան տակ առին էջմիածնի կարիքաւոր Երեխաներէն շատեր: Անշուշտ պիտի շարունակուէր այդ արշաւը յետագային, Կալային ետք:

Երեկոն գերազանցապէս պիտի շերմանար ներկայ Կալայի համար յատուկ նախագծուած գեղարուեստական յայտագրի մը հրածցումով:



ՈՒԽԻ ԼԵյֆ, Առաջնորդ Յովինան Արք. Տէրտիկը-եան, Մարի Տա Սիլվա եւ Կայանէ Թաթուլեան

Լաս Վեկասի անցեալի եւ ներկայի հրապորներով վարակուած արուեստագէտներու բեմահարթակ գալն էր անակնկալը: Էլվիսը՝ էլվիս Բրեսլի, Տիկնը՝ Տիկն Մարթինը, Թոմը՝ թոմ ծոնսընը, ներկայացուցին անոնց հարազատ կերպարներով գեղարուեստականօրէն յաջող կշռութիւն մը մէջ: Հանդիսատեաներու արամադրութիւնը աւելի բարձրացաւ երբ յատարարուեցաւ, թէ էլվիս Բրեսլին եւ Տիկն Մարթինը

կապկող Վեկասի ճանչյուած արուեստագէտներ «էլվիս»ը եւ «Տիկն»ը՝ հայեր էին:

Պիտի արժէր, նաեւ, գնահատել «էջմիածնի Երեխաներու ֆոնտ»ի Տիկնաց Միութեան Կալան կազմակերպող՝ վարագոյրի ետին գոնուող վարչական անձնակազմի աշխատանքը, որ փաստօրէն պակտուեցաւ, թէ էլվիս Բրեսլին եւ Տիկն Մարթինը:



ՀԱՅՐՈՒՈ՞ՎԵ

Կապահերգութիւն 2 այլառու

Հեղինակ՝ Ա.Ե.Յ ԳՈՒՆԻ
Թեմադրութեան

Կարուսել, Փետրվար 15 - ԿԱՆԱԿ - ԺԱՄ 5.00-ին. \$50

Չարաք, Փետրվար 7, 21, 28 - Ժամ 8:00-ին

